ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

**22 ՀՈՒՆԻՍԻ 2026թ.**

**ԹԻՎ 3671**

**« Ամուրա ՍՊԸ »-ին**
**ՀՎՀՀ 01091505**
**(Հասցե՝ Ավան, 2-րդ միկր, 2/10)**

**Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ**

**Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին**

Աշտարակի համայնքապետարանի և « Ամուրա ՍՊԸ »-ի միջև 2026 թվականի ապրիլի 30-ին կնքվել է ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-26/5-1 ծածկագրով ապրանքների մատակակարման գնման պայմանագիր (այսուհետ Պայմանագիր), որի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր)սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2հավելվածով:

« Ամուրա ՍՊԸ »-ի կողմից չեն պահպանվել պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները:

Պայմանգրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանգիրը, եթե. Կատարողն էականորեն խախտել է պայմանգիրը.

ա) խախտվել է մատակարարման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ « Ամուրա ՍՊԸ »-ը խախտել է պայմանգրով սահմանված պարտավորությունը ՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը՝ համարելով այն լուծված ընդհանուր 3464400(երեք միլիոն չորս հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր դրամ ) ՀՀ դրամի չափով ՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

<Գնումների մասին> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը մասնակիցը հրավերով և կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով « Ամուրա ՍՊԸ »-ին տրվում է 10 տասը օրացուցային օր տուժանքով սահմանված որոկավորման ապահովման 525000 /հինգ հարյուր քսանհինգ հազար/ՀՀ դրամը և պայմանգրի ապահովման 350000 /երեք հարյուր հիսուն հազար/ՀՀ դրամ գումարները Աշտարակի համայնքապետարանի 900445101083 հաշվին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում <Գնումների մասին> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն « Ամուրա ՍՊԸ »--ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով:

Առդիր՝ էլ.նյութ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. ԾԱՀԵՐԴՅԱՆ**

Կատարող՝
Հ.Հակոբյան
/0232/3-10-26*114